ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մայիսի 2017թ

N 19 -20 -Ն և 21 - 23 -Ա

Գ.ԿՈՂԲ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2017թ N19 – Ն

## ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2016թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Կողբ համայնքի ավագանին նշում է, որ համայնքի 2016թ. բյուջեն (նախկին Կողբ և Զորական համայնքներ) կազմվել է բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա և օրենքով սահմանված կարգով ներկայացվել ավագանու հաստատմանը:

Սահմանվել են նաև բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, հաստատվել համայնքային ենթակայության բյուջետային կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները:

2016թ. համայնքի բյուջեի վարչական մասը ներառել է՝ մուտքերի գծով՝ 138 125 181.00 դրամ, այդ թվում հարկային եկամուտներ՝ 20 595.1 դրամ, տեղական տուրքեր՝ 393.0 դրամ, պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ՝ 87 235 400.00 դրամ, պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ՝ 6 453 700.00 դրամ և պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիա) 5 334 700.00 դրամ:

Պետության կողմից հատկացված գումարները ներառվել են համայնքի բյուջեի եկամտային մասում և ծախսվել են նպատակային նշանակությամբ:

Բյուջեով 2016թ. սահմանվել է նաև համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ՝ 960 000.00 դրամ, պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ՝ 742 500.00 դրամ, այլ գույքի վարձակալությունից մուտքեր 240 000.00 դրամ, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմնին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար՝ 20 000.00 դրամ, տեղական վճարներ՝ 50 000.00 դրամ, հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ

չհանդիսացող համայնքի տնօրինմանն անցած գույք՝ 9 547 081.00 դրամ և օրենքով համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ՝ 50 000.00դրամ:

Մուտքերի մասով բյուջեն 2016թ. կատարվել է 94.3 տոկոսով ( համայնքի բյուջեի եկամուտների /մուտքերի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը կցվում է):

Օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված լիազորությունների իրականացման ընթացիկ ծախսերը հիմնական ուղղություններով կատարվել են՝ ընդամենը ծախսեր՝ 131 619 481.00 դրամի դիմաց՝ 122 589 260.00 դրամ, այդ թվում՝ տեղական ինքնակառավարում՝ 46 431 400.00 դրամի փոխարեն՝ 44 307 259.00 դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 200 000.00 և 200 800.00 դրամ, այլ դասերի չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 2 718 500.00 և 2 046 581.00 դրամ:

Համայնքի վարչական բյուջեից գյուղատնտեսության ոլորտում ծախսվել է 390 000.00 դրամ (պլան՝ 390 000.00 դրամ), աղբահանության վրա՝ 10 189 420.00 դրամ (պլան՝ 10 804 600.00 դրամ), ջրամատակարարման նպատակով՝ 4 774 000.00 դրամ (պլան՝ 9 547 081.00 դրամ), փողոցների լուսավորման վրա՝ 1 720 000.00 դրամ (պլան՝ 1 870 000.00 դրամ), մշակույթի ոլորտի վրա՝ 490 000.00 դրամ (պլան՝ 490 000.00 դրամ), նախադպրոցական կրթության վրա՝ 28 106 100.00 դրամ (պլան՝ 28 106 100.00 դրամ), արտադպրոցական դաստիարակության վրա՝ 14 764 600.00 դրամ (պլան՝ 14 764 600.00 դրամ), սոցիալական օգնության վրա՝ 1 400 000.00 դրամ (պլան՝ 1 400 000.00 դրամ):

Համայնքի վարչական բյուջեի ծախսային մաս է նախատեսվել ՝ 666 700.00 դրամ (համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կցվում է):

Համայնքի 2016թ. ֆոնդային բյուջեն մուտքերի մասով պլանավորվել է 26 771 304.00 դրամ (փաստացի ՝ 9 892 468.00 դրամ), իսկ տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 1 755 000.7 դրամ:

Տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված լիազորությունների շրջանակներում ֆոնդային բյուջեից կապիտալ ծախսումներ են կատարվել ջրամատակարարման համակարգերի կառուցման նպատակով՝ 2 973 624.00 դրամ (Զորական բնակավայր) և փողոցների լուսավորման նպատակով՝ 5 098 944.00 դրամ (Կողբ բնակավայր):

2016թ. բյուջետային պարտքեր չեն կուտակվել, իսկ բյուջեի փոփոխությունների և վերաբաշխումների հանրագումարը չի գերազանցել ավագանու որոշումներով գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ հաստատված առավելագույն չափաքանակին:

Ավագանին նշում է նաև, որ կատարված աշխատանքների հետ մեկտեղ բյուջետային տարում թերություններ և բացթողումներ են արձանագրվել բյուջետով նախատեսված եկամուտների ամբողջ ծավալով կատարման աշխատանքներում, որի պատճառով մուտքերը փոխադրամիջոցների գույքահարկի գծով կազմել են՝ 95.6 տոկոս, շենքերի և շինությունների համար՝ 95.3 տոկոս, հողի հարկի համար՝ 70.8 տոկոս, տեղական տուրքերը ՝ 81.5 տոկոս, հողերի վարձակալության վարձավճարները՝ 64.7 տոկոս և տեղական վճարները՝ 16.0 տոկոս:

Բյուջետային մուտքերի նկատմամբ թույլ հսկողության պատճառով բյուջեն անհամաչափ է կատարվել հաստատված եռամսյակային համամասնություններով:

Թույլ հսկողություն է իրականացվել նաև հաշվապահական հաշվառման և համայնքային ենթակայության կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ: Սեփական եկամուտների հավաքագրման գործում արդյունավետորեն չեն օգտագործվել վարչական լծակները:

Ելնելով վերոհիշյալից և առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով

## ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել 2016թ. բյուջեի կատարման մասին Կողբ համայնքի ղեկավարի հաշվետվությունը:
2. Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին /Ա. Լ. Աղաբաբյանին/.

    2.1. 2016թ. արձանագրված թերությունները և բացթողումները վերացնելու, դրանք ընթացիկ բյուջետային տարում չկրկնելու համար սահմանել աշխատանքի ծրագիր՝ և բյուջեի կատարման ընթացքի մասին եռամսյակը առնվազն մեկ անգամ հաշվետվություն պահանջել ՏԻՄ ֆինանսական ծառայությունից և հաղորդում ներկայացնել համայնքի ավագանուն,

    2.2. Հսկողություն սահմանել նաև ծախսերի կատարման նկատմամբ, պարզել ծախսային իրադրությունը, կրճատել կենսական նշանակություն չունեցող ծախսերը,

    2.3. Ուժեղացնել հսկողությունը հաշվապահական հաշվառման և համայնքային ենթակայության կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել Տավուշի մարզպետարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

| | | | |
|---|---|---|---|
| ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ   Կողմ --------------   Դեմ   ----------------   Ձեռնպահ   ----------------

ՔԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ   Կողմ --------------   Դեմ   ----------------   Ձեռնպահ   ----------------

Կողմ -- 6

Դեմ -0

Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`   Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ
17 մայիսի 2017թ

ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՀՀ *07619249*

## ՀՀ ֆինանսների նախար, 211041, Կողբ
## Հաշվետվություն
## Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ
## (02/01/16 - 30/12/16թ. ժամանակահատվածի համար)

| % | | կատարման% | Ճշտվածպլան | Փաստացի |
|---|---|---|---|---|
| NN | Եկամտատեսակները | (ս.8+ս.9) | վարչական բյուջե | վարչական բյուջե |
| 1 | 2 | 7 | 8 | 11 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում՝ | 94,30 | 138 125 181,00 | 130 252 228,00 |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 95,30 | 466 000,00 | 444 281,00 |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 70,80 | 5 870 000,00 | 4 158 054,40 |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 95,60 | 14 259 100,00 | 13 629 541,00 |
| 1132 | ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող | 153,00 | 30 000,00 | 46 000,00 |
| 1135 | բ) Համայնքի վարչ. տարածքում շենքերի, շինություն-ի, քաղաքաշինական այլ օբյեկտ-ի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման | | 0,00 | 0,00 |
| 1136 | գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | | 3 000,00 | 0,00 |
| 1137 | դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) | 80,40 | 276 000,00 | 222 000,00 |
| 1138 | ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար | 0,00 | 4 000,00 | 0,00 |
| 1139 | զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և | 0,00 | 50 000,00 | 0,00 |
| 1144 | ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու | 83,30 | 30 000,00 | 25 000,00 |
| 1251 | ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 100,00 | 87 235 400,00 | 87 235 400,00 |
| 1254 | բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1255 + տող 1256) այդ թվում՝ | 100,00 | 6 453 700,00 | 6 453 700,00 |
| 1255 | բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից | 100,00 | 2 530 500,00 | 2 530 500,00 |
| 1256 | բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | 100,00 | 3 923 200,00 | 3-923 200,00 |
| 1257 | գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 100,00 | 5 334 700,00 | 5 334 700,00 |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 64,70 | 960 000,00 | 622 777,00 |
| 1332 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 111,20 | 742 500,00 | 826 600,00 |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 4,20 | 240 000,00 | 10 000,00 |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար | 0,00 | 20 000,00 | 0,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352) այդ թվում` | 16,00 | 50 000,00 | 8 000,00 |
| 1351 | Տեղական վճարներ | 16,00 | 50 000,00 | 8 000,00 |
| 1372 | Ֆիզ. անձ. և կազմ. նվիրաբեր-ից համայնքին, վերջ. ենթ. բյուջ. հիմն. տնօրինմ. անց. գույքի (հիմն. միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.)իրաց-ից և դրամ. միջ-ից ընթ. | 50,00 | 9 547 081,00 | 4 774 000,00 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 0,95 | 50 000,00 | 475,00 |

ՀՀ ֆինանսների նախար, 211041, Կոռբ
Հաշվետվություն
Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ
(02/01/16 - 30/12/16թ. ժամանակահատվածի համար)

| NN | անվանումները | վարչական մաս | ֆոնդային մաս | վարչական մաս | ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 8 | 9 | 11 | 12 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000) | 133 021 481,00 | 26 771 304,00 | 122 589 260,00 | 6 492 418,00 |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 39 661 200,00 | X | 38 923 270,00 | X |
| 4212 | -Էներգետիկ ծառայություններ | 2 150 000,00 | X | 1 881 864,00 | X |
| 4213 | -Կոմունալ ծառայություններ | 600 000,00 | X | 0,00 | X |
| 4214 | -Կապի ծառայություններ | 1 000 000,00 | X | 883 027,00 | X |
| 4215 | -Ապահովագրական ծախսեր | 80 000,00 | X | 60 740,00 | X |
| 4216 | -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 800 000,00 | X | 800 000,00 | X |
| 4221 | -Ներքին գործուղումներ | 440 000,00 | X | 166 000,00 | X |
| 4232 | -Համակարգչային ծառայություններ | 202 000,00 | X | 200 800,00 | X |
| 4234 | -Տեղակատվական ծառայություններ | 441 000,00 | X | 203 000,00 | X |
| 4235 | -Կառավարչական ծառայություններ | 490 000,00 | X | 90 000,00 | X |
| 4237 | -Ներկայացուցչական ծախսեր | 100 000,00 | X | 100 000,00 | X |
| 4238 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 660 000,00 | X | 660 000,00 | X |
| 4241 | -Մասնագիտական ծառայություններ | 850 000,00 | X | 834 809,00 | X |
| 4252 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 200 000,00 | X | 175 000,00 | X |
| 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 700 000,00 | X | 643 180,00 | X |
| 4264 | -Տրանսպորտային նյութեր | 1 250 000,00 | X | 1 078 650,00 | X |
| 4267 | -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 500 000,00 | X | 140 600,00 | X |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 1 799 200,00 | X | 1 645 450,00 | X |
| 4411 | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 67 275 800,00 | X | 67 275 800,00 | X |
| 4543 | -Այլ կապիտալ դրամաշնորհներ (տող 4544+տող 4545 +տող 4546) | 9 847 081,00 | X | 5 074 000,00 | X |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 1 400 000,00 | X | 1 400 000,00 | X |
| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 380 000,00 | X | 300 000,00 | X |
| 4722 | -Այլ հարկեր | 30 000,00 | X | 14 820,00 | X |
| 4723 | -Պարտադիր վճարներ | 98 500,00 | X | 38 250,00 | X |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 666 700,00 | 2 829 804,30 | 0,00 | 0,00 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | X | 12 150 000,00 | X | 2 973 624,00 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | X | 5 400 000,00 | X | 5 098 944 00 |
| 5121 | - Տրանսպորտային սարքավորումներ | X | 7 000 000,00 | X | 0,00 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | X | 1 230 000,00 | X | 1 128 400,00 |
| 5123 | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | X | 1 061 500,00 | X | 691 500,00 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | X | 600 000,00 | X | 0,00 |
| 6310 | հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | X | -154 910,00 |
| 6410 | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | X | -3 500 000,00 | X | -3 245 140,00 |

ՀՀ ֆինանսների նախար, 211041, **Կոռբ**

Հաշվետվություն

Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ

(02/01/16 - 30/12/16թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Պլան 2016թ վարչական բյուջե | Պլան 2016թ ֆոնդային բյուջե | փաստ 2016թ վարչական բյուջե | փաստ 2016թ ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 10 | 11 | 13 | 14 |
| 2000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող 2600+ | 131 619 481,00 | 26 771 304,00 | 122 589 260,00 | 6 492 418,00 |
| 2111 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 46 431 400,00 | 8 700 000,00 | 44 307 259,00 | 999 700,00 |
| 2133 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 200 000,00 | 0,00 | 200 800,00 | 0,00 |
| 2161 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 2 718 500,00 | 1 150 000,00 | 2 016 581,00 | 128 700,00 |
| 2421 | Գյուղատնտեսություն | 390 000,00 | 691 500,00 | 390 000,00 | 691 500,00 |
| 2491 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | 0,00 | -3 500 000,00 | 0,00 | -3 400 050,00 |
| 2511 | Աղբահանում | 10 804 600,00 | 0,00 | 10 189 420,00 | 0,00 |
| 2631 | Ջրամատակարարում | 9 547 081,00 | 8 300 000,00 | 4 774 000,00 | 2 973 624,00 |
| 2641 | Փողոցների լուսավորում | 1 870 000,00 | 8 600 000,00 | 1 720 000,00 | 5 098 944,00 |
| 2823 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 14 230 500,00 | 0,00 | 14 230 500,00 | 0,00 |
| 2824 | Այլ մշակութային կազմակերպություններ | 490 000,00 | 0,00 | 490 000,00 | 0,00 |
| 2911 | Նախադպրոցական կրթություն | 28 106 100,00 | 0,00 | 28 106 100,00 | 0,00 |
| 2951 | Արտադպրոցական դաստիարակություն | 14 764 600,00 | 0,00 | 14 764 600,00 | 0,00 |
| 3071 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 1 400 000,00 | 0,00 | 1 400 000,00 | 0,00 |
| 3112 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 666 700,00 | 2 829 804,30 | 0,00 | 0,00 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2017թ N20 – Ն

### ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին և 5-րդ կետի պահանջներով

### ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համայնքի բյուջեի եկամտային մասի այլ եկամուտները ավելացնել 3660.0հազ. դրամ /ծնողական միջոցներ/:

1.1.Ծախսային մասում համայնքի բյուջեի բաժին 09 խումբ 01 դաս1 /նախադպրոցական կրթություն/ հոդված 4511 /սուբսիդիա/ ավելացնել 2160.0 հազ.դրամ:

1.2.Համայնքի բյուջեի բաժին 09 խումբ 5 դաս 1 հոդված 4511-ին ավելացնել 1500.0հազ.դրամ /արտադպրոցական դաստիարակություն/:

1.3.Համայնքի բյուջեի բաժին 01 խումբ1 դաս 1 /ապարատի պահպանում/ հոդված 4269 -ին /հատուկ նպատակային նյութեր/ ավելացնել 200.0հազ.դրամ , հոդված 4212-ին /էներգետիկ ծառայություն/ ավելացնել 300.0հազ.դրամ, իսկ հոդված 4252-ին /սարքավորումների վերանորոգում/ ավելացնել 200.0հազ.դրամ:

1.4.Համայնքի բյուջեի բաժին 01 խումբ 6 դաս1 /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ հոդված 4264 -ին /տրանսպորտային նութեր/ ավելացնել 100.0հազ.դրամ, հոդված 4269 /հատուկ նպատակային նյութեր/ ավելացնել 200.0հազ.դրամ: :

1.5.Համայնքի բյուջեի բաժին 05 դաս1 խումբ 1 /աղբահանում/ հոդված 4511 սուբսիդիան ավելացնել 600.0հազ.դրամ:

1.6.Համայնքի բյուջեի բաժին 01 խումբ 1 դաս 1 / ապարատի պահպանում/ հոդված 4216 /այլ գույքի վարձակալություն/ պակասեցնել 800.0հազ.դրամ, հոդված 4221/ներքին գործուղումներ/ պակասեցնել 200.0հազ.դրամ:

1.7.Համայնքի բյուջեի բաժին 05 խումբ 1 դաս1 /աղբահանություն/ հոդված 4213 /կոմունալ ծախսեր/ պակասեցնել 600.0հազ.դրամ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ Կողմ --------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ Կողմ --------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ Կողմ --------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ Կողմ --------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ --------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ Կողմ --------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

Կողմ -- 6

Դեմ -0

Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ
17 մայիսի 2017թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2017թ N21 – Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐՅՈԺԱ ԵՐԵՄԻ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ 0.11375ՀԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողբ համայնքի ավագանին նշում է ,որ 2001թ առաջին քարտեզագրման ժամանակ սխալմամբ 0.11375հա բնակավայրի բնակելի կառուցապատման 11-041-0175-0003 կադաստրային ծածակագրով հողամասը նշվել է համայնքային սեփականություն: 1975թ սկսած Սերյոժա Երեմի Ղարախանյանը սեփականության իրավունքի ուժով տնօրինել և օգտագործել է նշված հողամասը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով

## ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.11 - 041- 0175 – 0003 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման 0.11375 հա հողամասը ճանաչել որպես Սերյոժա Երեմի Ղարախանյանի սեփականություն:

2.Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին/Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ/ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասը սեփականության իրավունքով տրամադրել քաղքացուն:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

| | | | |
|---|---|---|---|
| ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ -------------- | Դեմ ---------------- | Ձեռնպահ ---------------- |

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ Կողմ ---------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ Կողմ ---------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ ---------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ Կողմ ---------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

Կողմ -- 6

Դեմ -0

Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ
17 մայիսի 2017թ

ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՇԱՀ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԷԷ *07619249*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2017թ N22 – Ա

## ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԶԵՂՉ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Զեղչել Կողբ համայնքի բնակիչ Արամայիս Խաչատուրի Ամիրզյանին սեփականության իրավունքով պատկանող ԳԱԶ 32213 մակնիշի 21SO239 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի 34452 դրամ գույքահարկը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ`

| | | | |
|---|---|---|---|
| ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |
| ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ | Կողմ --------------- | Դեմ --------------- | Ձեռնպահ --------------- |

**Կողմ -- 6**

**Դեմ -0**

**Ձեռնպահ –0**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ**
**17 մայիսի 2017թ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2017թ N23 – Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՌԵԼԻՔԻ ՕՐԱԿԱՆ ԾԱԽՍ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10 -րդ և 18-րդ հոդվածի 6-րդ կետերի պահանջներով

Ավագանին որոշեց

1.2017թ ծառայողական ավտոմեքենայի վառելիքի /բենզին/ ծախս սահմանել օրական 10/տաս/ լիտր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

ԱԲՈՎՅԱՆ ԷՌՆԵՍՏ Կողմ --------------- Դեմ --------------- Ձեռնպահ ---------------

ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ Կողմ --------------- Դեմ --------------- Ձեռնպահ ---------------

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ՎԱՀԵ Կողմ --------------- Դեմ --------------- Ձեռնպահ ---------------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ Կողմ --------------- Դեմ --------------- Ձեռնպահ ---------------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ -------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ Կողմ -------------- Դեմ ---------------- Ձեռնպահ ----------------

Կողմ -- 6

Դեմ -0

Ձեռնպահ –0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ
17 մայիսի 2017թ